ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«18» փետրվարի 2026թ. N 25-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 61-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և հաշվի առնելով «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի փետրվարի 9-ի N INS007-26 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի մայիսի 5-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 61-Ա հրամանի հավելվածը լրացնել 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

3	Մարտի 21-ին	18.30-ից 21.30	«ISO ստանդարտները քաղաքաշինության բնագավառում»	Ծովինար Բիլյան	«Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5	1-ին կարգի մասնագետին շնորհվելու է 3 կրեդիտ, 2-րդ կարգի մասնագետին շնորհվելու է 3 կերդիտ, 3-րդ կարգի մասնագետին շնորհվելու է 3 կրեդիտ	1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ, 3-րդ կարգի մասնագետ 01-34, մասնագիտություններ	անվճար

»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2/18/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ